ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19.07.2024 Թ. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀ, ք. Երևան

2024 թվականի հուլիսի 19-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ Արամայիս Փաշինյանը, Մարիամ Գալստյանը և Լիլիթ Ալեքսանյանը: Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստին մասնակցում էին նաև Հանձնաժողովի Հայտարարագրերի վերլուծության վարչության պետ Տիգրան Ծատուրյանը, Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի ավագ մասնագետ Ռուզաննա Առաքելյանը, Վարույթների և իրավական ապահովման վարչության գլխավոր իրավաբաններ Ելենա Արսենյանը և Արմեն Ավետիքյանը, և նույն վարչության ավագ իրավաբան Արթուր Վասիլյանը:

Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

Օրակարգ

1. Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքների ամփոփում:

Հայտարարագրերի վերլուծության վարչության պետ Տիգրան Ծատուրյանը ներկայացրեց Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի կողմից իրականացված՝ պետական ֆինանսավորման ենթակա՝ «Բարգավաճ Հայաստան», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Հանրապետություն», «Վերածնվող Հայաստան» «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություններ) ստուգման արդյունքները:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով սահմանված կարգով, կազմակերպել է, ի թիվս այլնի, պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտը: Տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով անցկացված բաց մրցույթում աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված մրցութային առաջարկների գնահատման հիման վրա հաղթող ճանաչված կազմակերպություններից բաց վիճակահանության փուլի արդյունքում վերջնական հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպությունների հետ կնքվել են աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Աուդիտորական ծառայությունների մատուցման արդյունքում աուդիտի եզրակացությունների տրամադրումից հետո Հանձնաժողովը, ղեկավարվելով

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով, սկսել է վերը նշված կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը:

Հանձնաժողովի՝ 2024 թվականի մարտի 22-ի «Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» N 01-L որոշմամբ ստուգման նպատակով լրացուցիչ տեղեկությունների, փաստաթղթերի ստացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգել 60 (վաթսուն) օրով:

Տարեկան հաշվետվության ստուգման ընթացքում Հանձնաժողովը վերը նշված կուսակցություններից պահանջել է Հանձնաժողով ներկայացնել տարեկան հաշվետվությունների ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, այդ թվում՝ կուսակցությունների բոլոր բանկային հաշիվների (բացառությամբ նախընտրական հիմնադրամների) վերաբերյալ տեղեկություններ, բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների մուտքերի և ելքերի վերաբերյալ քաղվածքները (առկայության դեպքում նաև դրանց էլեկտրոնային տարբերակները): Միաժամանակ, Հանձնաժողովը խնդրել է Աուդիտորական եզրակացությամբ, ինչպես նաև «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների հետ անհամաձայնության դեպքում ներկայացնել դրանց վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումն արտահայտող լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր: Ստուգման ընթացքում կուսակցություններին ուղղված տեղեկատվության հարցումները, ինչպես նաև ստուգման ընթացակարգերը եղել են գրեթե նույնական՝ բխելով հաշվետվություններում և աուդիտի եզրակացություններում արձանագրված անհամապատասխանությունների բնույթից:

Հանձնաժողովի՝ Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի կողմից իրականացված՝ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքները 2024 թվականի մայիսի 21-ին առաջին անգամ ներկայացվել են Հանձնաժողովի նիստի օրակարգ՝ քննարկման նպատակով: Հանձնաժողովի նիստում, Հանձնաժողովի անդամների կողմից հնչած դիտարկումների հիման վրա հանձնարարվել է առանձնացնել այն դեպքերը, որոնք կարող են պարունակել վարչական կամ քրեական իրավախախտման հատկանիշներ, դրանք ըստ սուբյեկտների ներկայացնել Հանձնաժողովի հաջորդող նիստի օրակարգ, իսկ ստուգման արդյունքների շտկումների իրականացման անհրաժեշտությամբ: Հարցի քննարկումը շարունակվել է Հանձնաժողովի՝ 2024 թվականի հուլիսի 19-ի նիստի ընթացքում: Պատասխանատու աշխատակիցների կողմից ամփոփ ներկայացվել են պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքները: Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգմամբ հայտնաբերված դեպքերի քննարկման արդյունքում Հանձնաժողովը.

ՈՐՈՇԵՑ

1. «Հանրապետություն» կուսակցության 2022 թվականի Տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպք չհայտնաբերելով պայմանավորված՝ ստուգումն համարել ավարտած: Հաշվետվության մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալների վերաբերյալ կուսակցությանը տրամադրել առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, ինչպես նաև կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնել վարչական իրավախախտման վերաբերյալ երկու վարույթ: Հաշվետվության մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալների վերաբերյալ կուսակցությանը տրամադրել առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:
3. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, միաժամանակ հանձնարարել Հայտարարագրերի վերլուծության վարչությանը՝ կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը *խոշոր չափերով* գերազանցելու ենթադրյալ դեպքի առթիվ նախապատրաստել գործի նյութերը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու նպատակով: Հաշվետվության մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալների վերաբերյալ կուսակցությանը տրամադրել առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու դեպքի առթիվ 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, միաժամանակ հանձնարարել Հայտարարագրերի վերլուծության վարչությանը՝ կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը *խոշոր չափերով* գերազանցելու ենթադրյալ դեպքի առթիվ նախապատրաստել գործի նյութերը՝ ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու նպատակով: Հաշվետվության մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալների վերաբերյալ կուսակցությանը տրամադրել առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

Միաժամանակ ընդունել ի գիտություն, որ կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցված է եղել 2024 թվականի հուլիսի 2-ին:

5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու, կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու և նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի

համապատասխանաբար 189.16-րդ հոդվածի 1-ին մասով, 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով և 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնել վարչական իրավախախտման վերաբերյալ 5 վարույթ: Հաշվետվության մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալների վերաբերյալ կուսակցությանը տրամադրել առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

Միաժամանակ, ընդունել ի գիտություն, որ կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով խոշոր չափերով շրջանցելու դեպքերի առթիվ 2024 թվականի հունիսի 6-ին երկու հաղորդումներ են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն: Բացի այդ, կուսակցության տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում հաշվետվությամբ ներկայացված նվիրատվությունների վերաբերյալ տվյալների արժանահավատությունն ստուգելու համար իրականացվել է կուսակցությանը նվիրատվություն կատարած՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու անձանց, հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում, որոնց արդյունքներով բոլոր այն դեպքերում, երբ առկա են եղել վարչական իրավախախտման վերաբերյալ առերևույթ դեպքեր, հարուցվել են առանձին վարչական վարույթներ, իսկ արդյունքում ընդունված վարչական ակտերը հրապարակված են Հանձնաժողովի պաշտոնական կայքի «Որոշումներ» բաժնում:

6. «Քաղաքացիական պայմանագիր» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունների կողմից Հանձնաժողովի պահանջով ոչ ամբողջական փաստաթղթեր տրամադրելու դեպքերի առթիվ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ չնախաձեռնել հաշվի առնելով գործընթացի՝ առաջին անգամ իրականացման փաստը, ինչպես նաև գնահատելով չներկայացված

տվյալների էականության, ինչպես նաև տվյալների գնահատման փուլում ստուգման արդյունքների վրա դրանց հավանական ազդեցության հանգամանքը:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ	**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	**ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	**ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**